ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 068-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1. Կառավարման մարմնի պահպանում 01 բաժնիի 01 խմբի 01դասի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածից պակասեցնել 100 000 ՀՀ դրամ,4267/ կենցաղային և հանրային սննդի նյութեր/ հոդվածից՝ 300 000 ՀՀ դրամ: Նշված գումարները ուղղել նույն ոլորտի՝

ա/ 4831 /դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ/ հոդվածին 100 000 ՀՀդրամ,

բ/ 4215/ապահովագրական ծախսեր/ հոդվածին 300 000 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժնի 01 խմբի 02 դասի գործառնական դասակարգման 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 44 000 000 ՀՀդրամ և ուղղել՝

ա/ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4621/ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին/ հոդվածին 24 000 000 ՀՀ դրամ,

բ/ Արենիի այլ մշակութային միջոցառումներ 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4727 /կրթական,մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածին 5 000 000 ՀՀ դրամ,

գ/ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01 բաժնի 03 խմբի 03 դասի 4819 /նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ հոդվածին 15 000 000 ՀՀդրամ,

3. Արենի այլ ոչ հարկային եկամուտներ 28 բաժնի 50 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 319 200 ՀՀ դրամ և նշված գումարն ուղղել՝ նախադպրոցական ուսուցում 09 բաժնի 01 խմբի 01 դասի 4512 /Սուբսիդիաներ ֆինանսական պետական կազմակերպություններին/ հոդվածին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**